ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ԵՂԻԱ ԱԲԵՂԱՅ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՕՍՈՒԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(6 սեպտեմբերի, կիրակի, 2009 թ.)

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ. ԱՄԷՆ:

«Եւ ելեալ եկեալ ամբոխ բազում, եւ գթացաւ ի նոսա,
զի էին իբրեւ ոչխարք՝ որոց ոչ իցէ հովիւ.
եւ սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ»

«Եւ դուրս ելնելով մեծ ամբոխ տեսաւ ու գթաց նրանց,
որովհետեւ նման էին ոչխարների, որոնք հովիւ չունեն.
եւ սկսեց նրանց ուսուցանել շատ բաներ»
(Մարկ. Զ. 34)

Սիրելի՛ բարեպաշտ եւ հաւատաւոր ժողովուրդ,

Աւետարանական այս հատուածը պատմում է, թէ ինչպէս նախքան հացի բազմացման առաջին հրաշքը, Յիսուսի մօտ հաւաքուեցին առաքեալները՝ Նրան պատմելով իրենց կատարած բոլոր գործերն ու ուսուցումները: Նրանք մշտապէս շրջապատուած էին մարդկանց հոծ բազմութեամբ եւ այնքան զբաղուած ու ծանրաբեռնուած էին, որ մինչեւ իսկ հաց ուտելու ժամանակ չէին ունենում: Ուստի Քրիստոս առաջարկեց գնալ մի ամայի տեղ ու փոքրինչ հանգստանալ: Եւ առանձնանալով ժողովրդից՝ նաւարկեցին մեկուսի մի վայր՝ հեռու աշխարհային թոհուբոհից: Սակայն մարդիկ, տեսնելով նրանց հեռանալը, եւ շատերն էլ ճանաչելով նրանց, բոլոր քաղաքներից հետիոտն, խուռներամ փութացին այնտեղ՝ նրանց մօտ: Այդժամ մեր Տէրը, դուրս գալով նաւակից, մեծ ամբոխ տեսաւ՝ նման այն ոչխարներին, որոնք հովիւ չունեն: Գթալով նրանց՝ սկսեց քարոզել ու սովորեցնել շատ բաներ: Իսկ իր աշակերտներին ցոյց տալով հունձքի առատութիւնը եւ մշակների սակաւութիւնը՝ յորդորեց աղաչել հնձի Տիրոջը, որպէսզի մշակներ հանի հնձի համար:

Այո՛, սիրելիներ, այդ մարդիկ նման էին ոչխարների, որոնք հովիւ չունեն: Սակայն ո՞վ է հովիւը: – Նա հօտի առաջնորդն է, որ հոգատարութեամբ խնամում եւ կերակրում է իր խաշներին: Հովիւը մշտապէս նուիրուած է իր հօտին: Նա երբէք սխալ տեղ չի առաջնորդում իր ոչխարներին: Եւ եթէ պատահի, որ նրանցից թէկուզ մէկը մոլորուի ու ընթանայ զարտուղի ճանապարհով, արդեօք հովիւ մնացեալին չի՞ թողնի մի կողմ՝ շտապելով փնտռել ու գտնել կորած գառնուկին: Իսկ եթէ գտնի նրան, աւելի մեծ պիտի լինի իր ուրախութիւնը, քան որ ունէր մնացած ոչխարների համար (հմմտ. Մատթ. ԺԸ. 12-13, Ղուկ. ԺԵ. 3-7):

Հին Ուխտում հանդիպում ենք արդար հովիւների շատ օրինակների: Հովիւ էր Յակոբը, հովիւ էր Յովսէփը, հովիւ էին նրանց եղբայրները, հովիւ էր Մովսէսը, նաեւ Դաւիթն ու Ամովսն էին հովիւ: Այս բոլոր հովիւները բարուք հովուեցին ու անվրէպ առաջնորդեցին իրենց ոչխարներին: Նրանք նախ խաշներին հովուեցին եւ ապա ընտրուեցին հովուելու մարդկանց, որպէսզի սովորեն, թէ ինչպէ՛ս է հարկաւոր հովուել հօտին, ինչպէ՛ս է պէտք տքնել ու սրտացաւ լինել նրա համար: Այսպէս, Յակոբը Լաբանի գառները հովուելուց յետոյ միայն առաջնորդեց իր որդիներին եւ նրանց սովորեցրեց հովութիւն: Նաեւ Յովսէփն էր իր եղբայրների հետ ոչխարներ արածեցնում՝ եգիպտացիների երկրում լինելով զօրքի առաջնորդ: Մովսէսը եւս հովուեց Յոթորի հօտերին եւ ընտրուեց՝ քառասուն տարի հովուելու իր ժողովրդին: Այնուհետեւ նա հովութիւն սովորեցրեց իր աշակերտ Յեսուին, որն առաջնորդեց Իսրայէլի որդիների ողջ բանակը: Դաւիթը նոյնպէս հովուեց իր հօտի խաշները եւ ապա բարձրացաւ՝ հովուելու իր ազգակիցներին: Ամովսին Տէրը ոչխարների միջից վերցրեց եւ նրան մարգարէ դարձրեց, ու նա այլեւս չվերադարձաւ՝ գառներ արածեցնելու: Եղիսէին նոյնպէս վերցրեց եզների միջից, որպէսզի մարգարէ լինի Իսրայէլի մէջ: Նա դրանից յետոյ չգնաց իր եզների մօտ, այլ Եղիային ծառայեց եւ նրա տեղն զբաղեցրեց:

Նոր Ուխտի եկեղեցում այլաբանօրէն եւ աստուածաբանական իմաստով գերագոյն Հովիւն ու ճշմարիտ Հովուապետը Քրիստոս Ինքն է, որ ամէն ջանք թափեց Իր հօտի համար. «մօտեցրեց հեռաւորներին, եւ դարձրեց մոլորուածներին, բժշկեց հիւանդացածներին, զօրացրեց տկարացածներին, փաթաթեց վիրաւորուածներին եւ պահպանեց պարարտներին... Եւ ընտրեց, ուսուցանեց առաքինի աշակերտների, նրանց ձեռքն աւանդեց ամբողջ հօտը եւ ասաց Շմաւոն Վէմին. «Արածեցրո՛ւ իմ ոչխարներին» (Յովհ. ԻԱ. 17) (Ս. Յակոբ Մծբնեցի):

Սրբազան Պօղոս Առաքեալը, երբ Միլետոնից Եփեսոս մարդ ուղարկելով կանչեց եկեղեցու երէցներին, որպէսզի իր մեկնումից եւ հրաժեշտ տալուց առաջ նրանց բաշխի իր հովուական փորձառութիւնը, վերջում մի պատգամ տուեց՝ ասելով. «Զգո՛յշ եղէք ինքներդ ձեր եւ ամբողջ հօտի համար, որի վրայ Սուրբ Հոգին տեսուչներ կարգեց ձեզ՝ հովուելու համար Տիրոջ ժողովրդին, որին նա փրկեց Իր արեամբ: Սակայն ես գիտեմ, որ իմ մեկնելուց յետոյ ձեր մէջ կը գան յափշտակիչ գայլեր, որոնք չեն խնայի հօտին» (Գործք. Ի. 28-29): Հօտ բառի գործածումով Սուրբ Գիրքը, ինչպէս տեսանք, նկատի է ունենում Աստուծոյ ժողովրդին, եւ միաժամանակ «ոչխարներ է կոչում, որովհետեւ մոլորուեցին ինչպէս մի կորած ոչխար, որ հովիւ չունի... Այլեւ Ինքը՝ Քաջ Հովիւը, Գառնուկ եղաւ Իր Հօրից, որի համար Յովհաննէսն ասաց. «Սա է Աստուծոյ Գառը» (Յովհ. Ա. 29): Նախ, որ մեզ համար զգեստ եղաւ՝ ծածկելով Ադամի մերկութիւնը, ապա կերակուր եղաւ մեզ համար Իր Մարմնով ու Արեամբ եւ անմեղ լինելով՝ մեզ համար զոհուեց... Նա, ով հովիւն ու խնամողն էր երկնաւորների, եղաւ նաեւ հովիւ մարդկային ազգի...» (Ս. Գրիգոր Տաթեւացի):

Քրիստոսի սուրբ առաքեալները Տիրոջից հրաման ստացան՝ Ս. Հոգով քարոզելու եւ եկեղեցիներ հաստատելու: Եւ քանի որ կենդանի քարոզը պէտք է ամէն օր եկեղեցում անպակաս լինէր, ուստի, ինչպէս կարդում ենք Պօղոս Առաքեալի՝ Եփեսացիներին ուղղուած նամակում. «Նա շնորհ տուեց՝ ոմանց լինելու առաքեալներ, ոմանց՝ մարգարէներ, ոմանց՝ աւետարանիչներ, ոմանց՝ հովիւներ եւ ուսուցիչներ՝ հաստատելու համար սուրբերին իրենց

պաշտօնի կատարման մէջ՝ ի շինութիւն Քրիստոսի մարմնի, մինչեւ որ մենք բոլորս հասնենք հաւատի կատարեալ միութեանն ու Աստուծոյ Որդու ճանաչմանը...» (Եփես. Դ. 11-13): «Եւ ո՞վ է այս շնորհի միջնորդն ու մատակարարը, ուրիշ ո՞վ, եթէ ոչ մեր Տէր Յիսուս Քրիստոս՝ Կեանքը, Լոյսը, Ճանապարհը, Դուռը, Հովիւը, Քահանայապետը, Միջնորդը, Բարեխօսը, Յոյսը, Կարապետը...» (Ներսէս Լամբրոնացի): Մեծ Հօտապետը հովիւ կոչուելու եւ ժողովրդին հովուելու բացարձակ իշխանութիւնն ու աստուածատիպ շնորհը առաքեալների միջոցով ձեռնադրութեան սուրբ խորհրդով փոխանցեց իւրահիմն Եկեղեցու օծեալ սպասաւորներին, որոնք, շարունակելով բարի Հովուի առաքելութիւնը, յանձնառու են սիրայօժար հոգ տանելու, անքուն հսկելու եւ անսայթաք առաջնորդելու իրենց վստահուած հօտը՝ դէպի երկնի խաղաղ ու անվրդով Արքայութիւնը:

Ներկայ դժպիհ ժամանակներում մեր Սուրբ Եկեղեցին կանգնած է բազմատեսակ մարտահրաւէրների առջեւ: Մի կողմից՝ օտարամուտ կեղծ արժէքների թափանցումը հայկական ընտանիքներ, մատաղ սերնդի ապազգային դաստիարակութիւնն ու ոչ հայեցի մտածելակերպը, իսկ միւս կողմից՝ հակաքրիստոնէական յոռի բարքերի որդեգրումը, եկեղեցու դէմ հնչող տարաբնոյթ վայրահաչութիւնները բզկտում ու թուլացնում են հայորդեաց հաւատն առ երկնաւոր մեր Տէրը, սէրը՝ մայր հայրենիքի նկատմամբ, նուիրումը՝ հանդէպ Հայ Եկեղեցին: Մեր հոգեւոր մօր շնորհաած արգանդից՝ Ս. Աւազանից վերստին ծնուած իւրաքանչիւր քրիստոնեայ այսօր առաւել, քան երբեւէ պարտաւոր է համախմբուել ու միաբանուել իր հոգեւոր հովուի շուրջը, որպէսզի յանկարծ թշնամին չյաղթի, որպէսզի ուժեղ ու անկոտրում կամք դրսեւորուի՝ սատանայի ու նրա արբանեակների յարձակումներին անսահանջ դիմակայելու համար: Իսկ Տիրոջ բանական հօտի առաջնորդներս մեր կեանքի բոլոր օրերում անընկբայօրէն պէտք է հետեւենք ու աշակերտենք Քրիստոսի Եկեղեցու սրբազան հովիւներին՝ առաքելաշնորհ եւ տիեզերալոյս մեր Հայրերին՝ նրանց կեանքը, խօսքը, գործը մշտապէս մեզ ճանապարհակից դարձնելով, իսկ հաւատաւոր ժողովրդին՝ դրանք որպէս անարատ կաթ ջամբելով…

Սիրելի՛ հաւատացեալներ, աղօթենք, որ Բարձրեալ Տէրը Իր առատ հնձի համար պատրաստի արժանաւոր մշակներ՝ առանց ամօթի ու գայթակղութեան: Եւ թող մենք կցորդ լինենք Իր սուրբ եւ ընտրեալ հովիւների անսուտ վարձատրութեանը՝ նրանց հետ փառաւորելով մեր Քրիստոս Աստծուն՝ յաւիտենական Քահանայապետին, Հօր եւ Ամենասուրբ Հոգու հետ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին
Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն: